Բոստան իմ դրեր

1. Բոստան իմ դրեր վեր էնա դարին,
Աստված շեն պահեր էս տարվա տարին,
Չէլավ մեյ շաման՝ հորոխկեմ յարին,
Սըրտիս դարդերը էրին, խորովին:

Հո՜յ նար նա նանոր, ջա՜ն նոր նանանոր,
Սըրտիս դարդերը էրին, խորովին:

2. Ցորեն իմ ցանիր խատ առվի ական,
Շողերն ի թալիր խատ արեգական,
Արծիվն ի կիրիր, տվիր ձգական,
Կաքավ խըռովիր ուր խերկան, մերկան:

Հո՜յ նար նա նանոր, ջա՜ն նոր նանանոր,
Կաքավ խըռովիր ուր խերկան, մերկան:

Ցորեն ցանեցի խատ գութնի ական,
Էլավ բանձրցավ խատ արեգական,
Էլա քաղելու, ձի կսմաթ չէլավ,
Իմ յարոջ սրտիկ վեր ձի կախ էլավ:

Հո՜յ նար նա նանոր, ջա՜ն նոր նանանոր,
Իմ յարոջ սրտիկ վեր ձի կախ էլավ: